ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ծովազարդ բնակավայրում արդյունաբերական շինությունը ռեստորանային համալիր վերակառուցելու վերաբերյալ

Ծովազարդ բնակավայր ***17.01.2025***

ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Ծովազարդ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ հանրային քննարկում՝ Կարեն Գալոյանի կողմից նախատեսվող Ծովազարդ բնակավայրի Զորավար Անդրանիկի 8-րդ նրբանցք 11 հասցեում արդյունաբերական շինությունը ռեստորանային համալիրի վերակառուցման և գոյություն ունեցող ջերմոցների ապամոնտաժման աշխատանքների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ:

Հանրային քննարկմանը մասնակցել են ՇՄԱԳ ներկայացուցիչ Հ. Ալեքսանյանը, Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ներկայացուցիչներ Դ. Զանգեզուրյանը և Հ. Հարությունյանը, Գավառի համայնքապետարանի ներկայացուցիչ Ա. Կատվալյանը, Ծովազարդի բնակիչներ:

Առցանց եղանակով հանրային լսմանը մասնակցել և նախագծին վերաբերվող մանրամասներ է ներկայացրել ճարտարապետ-նախագծող Ա. Ֆրանգյանը:

Ըստ իրականացվելիք աշխատանքների նախատեսված է առկա արդյունաբերական համալիրի 3065,93 քմ մակերորսով շենքի 1251,68 քմ-ն ապամոնտաժել, իսկ 2808,02 քմ-ն՝ վերակառուցել:

Գոյություն ունեցող 2960,70 քմ տարածքի ջերմոցները ևս ապամոնտաժվելու են:

Իրականացվող աշխատանքների մասին իրենց կարծիքներն ու դիրքորոշումներն են հայտնել ծրագիրն իրականացնող, վերահսկող և համագործակից կազմակերպությունների ներկայացուցիչները, ովքեր պատասխանել են նաև բնակիչներին հետաքրքրող հարցերին:

Հանրային լսման նախագահող՝ Գավառ համայնքի ղեկավարի օգնական՝

Արամ Կատվալյան

Քարտուղարող՝ Գավառ համայնքի Ծովազարդի առաջատար մասնագետ՝

Արմեն Ղազարյան